ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

Առաջադրանքներ

1. Գտի՛ր սխալ տողադարձված բառը:

ա) Սե-վան
բ) մոռացկ-ոտ
գ) գը-լուխ
դ) տարած-վել

2. Նշի՛ր այն տարբերակը, որում տողադարձը ճիշտ է արված.

ա) տանտի-րուհի, բ) լուս-ամուտ, գ) աբ-եղա, դ) գըրա-շար:

3. Տրված բառերից որի՞ առաջին վանկն է բաց.

ա) ընկույզ, բ) ծաղկման, գ) ընտանի, դ) կահույք:

4. Տրված բառերից ո՞րը գավազան բառի իմաստներից չէ.

ա) ցուպ, բ) մահակ, գ) մական, դ) գահավորակ:

5. Գտի՛ր տրված բառերի արմատները, գծիկով բաժանի՛ր բաղադրիչների և նշի՛ր բառերում արմատների և ածանցների քանակը:

Փոքրիկ, արջ, որսորդ, հատվածային, մայրական, տնակ, հերկել, հող, խնձոր, խոսել, պահակ, ուսուցիչ, աշակերտ, ոսկեղեն, բանակային. մատնոց, ծառ, գյուղացի, սերմացու, հոչակավոր, երևանցի, համեղ, սահուն, գունատ, Հայաստան, ընկերաբար, կանաչավուն, հենակ, գնորդ, աճուրդ, զորություն:

Նմուշ՝ փոքր-իկ՝ 1 արմատ, 1 ածանց:

6. Տեքստից դո՛ւրս գրիր բարդ և ածանցավոր բառերը:

Հանդարտահոս այդ գետի արևահայաց ափին վսեմորեն բազմած էր լեռնաշղթան՝ սուրսայր կատարներով: Այն ավելի էր վեհացնում հոգեզմայլ ալպյան մարգագետինների գեղեցկությունը՝ երփներանգ, փարթամ, զմրուխտաշող: Ականակիտ գետը, բարձրաբերձ, երկնահուպ լեռնաշղթան, թավշականաչ մարգագետինները լուռ վկաներն են իմ խենթ մանկության:

Ու հիմա, երբ կրկին կարոտակեզ այցի եմ եկել ոսկեթև ման-

կությանս նվիրական, սրբասուրբ վայրերին, պղտորված աչքերիս առաջ իմ մանկության սրտահույզ պատկերներն են, որ լռելյայն գալիս են որպես վաղուց անդառնալիորեն փշրված, անէացած քաղցր երազի բեկորներ:

Նմուշ՝

Ածանցավոր բառեր	Բարդ բառեր
Վսեմորեն	Հանդարտահոս

7. Նախորդ առաջադրանքի տեքստը հարստացրու՛ հերոսներով՝ գործողություններին նոր ընթացք հաղորդելով: Վերնագրի՛ր շարադրանքդ:

8. Ըստ բաժնի՝ ստեղծի՛ր ուսումնական նյութերի բառարան, պաստառ, գրքույկ և այլն, հակիրճ գրառումնե՛ր արա դրանց համար՝ համագործակցելով ընկերներիդ հետ (նախագծային աշխատանք):